

# ՀԱՆ ԴԵՍ ՈՒՍ ՈՒՄՆ ԱԿԱՆ

## ՍՔԻՍԱԲԱՐԵԼԼԻ ԱՍՏՂԱԲԱՇԻ ԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆ

### ՅԱԽԻՆ 1882 ԵՐԵՒՑԱԾ ԳԻՍԱԽՈՐԻՆ ՎՐԱՅ

Բարեկենդանի վերջի կիրակէն, առաւօտուն 7ին, զուարճաձայն ներգաղնակութեամբք և պարսուր երազտուն զուգից շափակցիալ քայլերով կը հնչէր Ֆիլոտրամադիգոյ (Միլան) թաւտրոնն. յետ միջօրէի երկուքին, ստամանակուն ընթերցանութեանց սրահի մը փոխուած էր:

Ինչոցած վարազուրին վրայ շորս մեծամեծ ցուցական տախտակներ կախուած կը տեսնուին. առաջինն կ'ընծայէր Գիսաւորին ընթացքը արևապին դրութեան մէջ 1882 սեպտեմբերի 2էն, որ իրեն երևելուն ժամանակն է, ինչուան 4 փետրուար 1883. երկրորդն, Գիսաւորին իրական ընթացքը յետ միջօրէի ժամուց մէջ 1882 սեպտեմբերի 17ին, և իրեն Արևուն մերձենայր. երրորդին մէջ գծած կը տեսնուի Գիսաւորին ընթացքն յետ միջօրէի ժամուց մէջ 1882 սեպտեմբերի 17ին, և իր անցքն արևուն սկաւառակին վրայէն. հուսկ յետոյ շորրորդ տախտակն, մեծազոյն տարածութեամբ և վարազիտով մէջտեղը զետեղեալ, կը պարունակէ հեռազիտով տեսնուած մեծ Գիսաւորը, ՚ի 22 նոյեմբերի 1882, առաւօտուան 4ին:

Մտախաբութեանց շառաչիւն մ'ընդունեցաւ զմեր քաջանուն և սիրելին Արևարարելի, երբ ներկայացաւ հասարակութեան: Հարտասունն սկսաւ իր բանակցութիւնը, իմացընելով ռոճկիկրաց՝ որ պիտի չդեգերի ունայն տեսլորդապաշտութեանց և սուտ նոխապարտմանց և արհաւիրաց յարուցելոց մերձաւոր ժամանակներս՝ այս խորհրդաւոր աստեղից երևմանէն, և սպա մասնաւորապէս տունց մեր գծտին օգերևութեան հանգամանաց վրայ տեսակ մ'ազգեցութիւն գործելուն հաւանականութեան, կամ թէ իրենց հանդիպումն կարենայ կերպով մ'աղիտարու հետևութիւններ բերել մեր Երկրի բնակչաց վիճակին վրայ: Քոզցես նախատինք մ'ըրած կ'ըլլայի, կ'ըրէ ճարտասանն, այս ունկնդրաց բազմութիւնը կազմող ներհուն անձանց, ի թէ կարևոր համարէի ցուցնելու թէ այս պատահարիս մէջ պարզապէս ընական պատճառքն են, որոնց հետ

գործ մը չունին ոչ երկնային բարկութիւնն և ոչ ազգաց բաղդն: Բայց որովհետև, ըսաւ, իրեն հարցուած ըլլալով թէ մեծ Գիսաւորն կրցեր է կերպով մ'աղգել հեղեղաց վրայ՝ որովք քանի մ'ավու է ապականեցիկ արևմտեան Վենետոյ գաւառքը, յի համարձակիր ոչ պատասխանելու, բնագիտական աշխարհի մեծ գործ երբ միացընող կապքն բազում և զանազան ըլլալով: Բայց աստի պաշտպանեց թէ այս դիպուած իս մէջ չի կրնար ըլլալ որ և իցէ կապակցութիւն միջման զի այն օրերն յորս կը զայլաբանային հեղեղմունքը, Գիսաւորն դեռ շատ հեռու էր մեզմէ, և աւելցուց թէ չկայ պատճառ մը որ արդարացրէ թէ ինչու այսպիսի աղէտք միայն քանի մը վտտարադր գաւառաց վրայ հասան և ոչ ամբողջ գնտիոյ:

Փնտրուենք մանուսանդ պատճառը, աղտոյակեց ուտոյցին, միջնորոտային շարժմանց անկանոնութեան մէջ, որոց օրէնքը գծարդաբար դեռ շատ քիչ կը ճանչնանք:

Յանակցութեան գլխաւոր նիւթոյն վրայ դառնալով, հրաւիրեց զհասարակութիւնը երկնային գաւառաց մէջէն իրեն հետ յընապայութիւն մ'ընելու, գիտնալու համար թէ այս երկնային գանդուխտն ուստի եկած, ուսկից անցեր է, և ուր կ'երթոյ:

Արևային դրութեան յօրինուածութեան և տարածութեան համառօտ նկարագիր մը տալէն յետոյ, միայրսիաց շրմանաց մէջ գծեց Գիսաւորին ընթացած կարը, զոր համեմատեց վերնետուած քարի մը ծրագրած գծին, գրեթէ զուգահեռական ուղղութեամբ. և ըսաւ, որ ասոյն անգամ տեսնուելու յձ սեպտեմբերի Աքլանտի քաղաքին մէջ ՚ի Նոր Ձիւնտաս ցետոյ ունկնդրաց ուշադրութիւնը դադարեցնուց մասնաւորապէս մեծ երազութեան վրայ, որով Գիսաւորն անցած սեպտեմբերի առաջին օրերուն մէջ Արևուն մտնեցաւ, երազութիւն՝ գոզցես անխոնայի, այսինքն է ամեն մանրերկրորդ 480 քիլոմէթր: Գրաւ առաջ իրեն Արևուն մտնանցին պարագայքը, յ17 սեպտեմբ.

ների, այսինքն է արևամերձին, որով ժամանակ  
 Վիսաւորն գնաց գրեթէ քերելով Արևուն մա-  
 կերութիւն վրայէն, և անհուն ջերմութեան մը  
 ենթարկեալ գտնուեցաւ, և այս եղաւ գլխա-  
 ւոր պատճառ վերջին մեծ անձնան՝ զոր ապա  
 աստեղ մթնոլորտն և գէւն ունեցաւ:

Վիսաւորին անբաւ երազութիւնն բուական  
 եղաւ այն ճգնտիրան վայրենիին յաղիւն ձգո-  
 ղողիսն զօրութեան, որով Արևն զայն իրեն կը  
 քայէր. ուսկից ետքը Վիսաւորն շարունակեց  
 իր ճամբան:

Այս մինչև ցայսօր միտ կարևոր զննու-  
 թիւնս, աստղաբաշխից սիւրտ հինաւորեց փա-  
 փազ մ'եղած էր, գիտնալու համար թէ այս  
 աստեղաց գիտնին մէջ կոյ գգալի տարածու-  
 թեամբ գիմաշար միջավայր մը:

Այնկալեալ Վիսաւորն յիշատի անցաւ Ա-  
 րևուն գիմաշէն աւանց բնաւ զայն նսեմաց  
 ներս, և առանց անոր սկաւառակին վրայ տե-  
 աննելի բիծ մը կամ հետք մը ձգելու, և այս կը  
 ցուցնէ անոր նիւթոյն անհուն անօրութիւնը  
 և իր հաստատուն միջավայրին փոքրութիւնը:

Աւելցուց ճարտասանն, որ իրեն երևման  
 վայրենիէն մինչև ցարդ եղած զննութեամբք  
 կարելի եղեր է հաստատել թէ այս Վիսաւորս  
 պարբերական է, բայց երկայն շրջանով, և թէ  
 կը դառնայ Արևուն 'ի սահմանեալ միջոց' Ցէն  
 մինչև ցճ դարս:

Յետոյ անցաւ նկարագրերու աստեղ երևոյ-  
 թը և մեծութիւնը, իրեն ընթացից զանազան  
 տեսեանց մէջ, Արևուն ազդեցութիւնը կրելէն  
 ետքը, այնպիսի պայծառութիւն ունէր, աղա-  
 զակեց, որ 'ի Վոլտին Բարեբուսոյ կրցան նկա-  
 տել քայն օրուան մէջ: Այս տարապայման  
 լոյսս, ըստ սթանան բնագիտաց, թուի թէ ծա-  
 զումն ունեցած ըլլայ յեղեկորական զօրաւոր  
 արձակմանց:

Յըցուց ապա զդրոբոր տախտակը, որ կը  
 ներկայացնէ Վիսաւորին մեծագոյն անձան  
 համեմուն կէտը, մասնաւորապէս տարածու-  
 թեան նկատմամբ. անելցուց որ եթէ Երկրիս  
 զիւրն զիւրզագոյն ըլլար, Վիսաւորն չորս կամ  
 հինգ անգամ աւելի երկայն կը տեսնուէր: Յի-  
 բուսի նոյն օրն իր իրական երկայնութիւնն ըս-  
 տագիւն անկարծելի եղաւ, այսինքն է յիսուն  
 հազար անգամ Երկրիս տրամագիծն, և կոթ՝  
 չորս անգամ Երկրիս Արևէն հեռաւորութիւնն:  
 Այնքան ճոխութիւնն, ըստ աստղաբաշխի ու-  
 ղումն, միայն քանի մը քիւղկրամ նիւթ կը բո-  
 վանդուէր:

Պարզ աչք նկատելով զՎիսաւորը, միայն  
 իր աւելի լուսաւոր մասը կ'երեցնէր, այլ հե-  
 առէտ մը գործածելով, նաև ոչ այնչափ մեծ-  
 ցնող, կրնար ճանդուիլ որ աւելի շողողուն  
 մասին կողմը երկարորդ գէս մ'ալ կար' նուազ  
 լուսաւոր, որ Վիսաւորին գլխէն անցնելով,

փոքր մի զէպ յԱրև կը տարածուէր, ժուելով յե-  
 սոյ զէպ 'ի լուսաւոր գէտը և անոր այլ ու ձախ  
 կողմը թխազոյն և դուրս գցուած երկու շաւիղ  
 թողլով: Այս վիճակիս մէջ իրեն ա' 'ի շեղ  
 շախն հասաւ գրեթէ 40 միլիոն քիլոմետր:

Յետ Ձ1 նոյեմբերի, Վիսաւորն օրէ օր երթա-  
 լով նուազեցաւ պայծառութենէն, և քանի մը  
 եօթնեկէն վերը մեր աշուրներէն բարտովին  
 պիտի անհետանայ գէսն, մնալով միայն անըս-  
 տող միգամածութիւն մը:

Յետոյ զըցուց թէ ինչ կերպով արևային ջեր-  
 մութեան ազդեցութեամբ միջավայրին վրայ  
 Վիսաւորաց մթնոլորտն կ'անոտայ, և ինչպէս  
 փանդական զօրութեան մ'ընթաց, զոր կը  
 ներգործէ Արևն նայն մթնոլորտին նիւթ յն  
 մէկ մասին վրայ, կամաց կամաց կը ձևանայ  
 գէսն Արևուն հալառակ կողմը. ինչպէս կը  
 ջրուր գէսն միջոցին մէջ, և ինչպէս արևային  
 ջերմութիւնն զազդելով միջավայրն չի կրնար  
 մատակարարել իրեն նոր նիւթ, որով և առ սա-  
 կաւ սակաւ գէսն իր զոյութիւնը կը կորսնցնէ:  
 Բովանդակեց բնելով, որ Վիսաւորաց պոչն ձևա-  
 ցած է այն նիւթը մասամբ՝ զորս Արևն կը  
 մերժէ իրմէ խորհրդաւոր զօրութեամբ:

Այս կը մեկնէ թէ ինչ կերպով հաստատուն  
 միջավայրէն բաժնուելով անոր քանի մը մա-  
 սուլն, յերախոտութեանց և ճայթմանց ձեռ-  
 քով, որոք Վիսաւորին զիտնյն մէջ կը հանդի-  
 պին, կը հեռանան այն միջավայրէն, և անկէ  
 կը թողուին Վիսաւորին անցած ճամբուն եր-  
 կայնութեամբ, այն սիեզերական մանրամազ  
 փոշեաց երկայն հետքը ձևացնելով, որ յետոյ  
 Երկրիս հանդիպելով, ասուպներու ծագումը  
 կու տան:

Վրտնայ անգիտացոյն, որ ստուգիւ պարբե-  
 րական Վիսաւորաց արտօսւց կարգի գիւտը,  
 սերտ յարաբերութեամբ միացեալ թռչող սա-  
 տեղաց անկման (Ոսս) շէտ, պարտական ենք  
 նոյն ինքն Սթրասբուրի ուսուցչին, որ օգոս-  
 տոս 1891 ամենածանօթ ասուպներու անկման  
 զուգորդական սկզբունքը հաստատելու մտա-  
 ծութիւնը ունեցաւ, իրբև թէ այնպիսի Վիսա-  
 ւոր մ'ըլլար՝ որ երկնային հեռաւոր միջոցէն  
 գար, և կրակացնելով որ սոյս անկմուքս ա-  
 րևային դրութեան պէտք էին օտար ըլլայ:

Տըտնէյ, իրեն յ18 մայիսի 1868ին աստղա-  
 բաշխական մրցանակին վրայ 'ի շէմարանն (Վա-  
 րիզու տուած տեղեկութեան մէջ յայտնեց, որ  
 մեր ուսուցչին, որուն արուեստը լայնատ հի-  
 մնադորութեան միտալն, այսպիսի գիւտով բոլո-  
 ղովին նոր ճամբայ մը բացեր էր, այնպիսի ճամ-  
 բայ մը, որով առաջնորդեց աստղաբաշխից ա-  
 մենակարևոր հետեւանաց, սիեզերաց ներքին  
 կազմութեան նկատմամբ:

Ուստի կրնայ երկարակարգ թէ որչափ յար-  
 գութեամբ, որչափ համեստութեամբ կը զբաղի

յետոյ ինդորոյն, և բռնեք նաև, քանի՛ յուզմամբ կախուած կան իր շրթունքէն, երբ ինքն իսկ կը խօսի Գիտաւորաց ծագման վրայ, և կը խօսի այնպիսի յատուկութեամբ, զոր ունին մեծ ամծ պիտանականք:

Նախ կը մեկնէ յարմարագոյն և յատկատես նմանութեամբք, լուսապատկերացուցին միջոցով երկնային մարմնոց տարրաբանական կազմութիւնը զննելու եղանակը, յիշատակելով հրթիռներու գոյները, զորս սրուեստին տեղեակ մէկն պարզ տեսնելով կրնայ բռնի թէ ինչ նիւթէ յառաջ կու գան, այսինքն է պղնձնէ, զիննէ կամ երկաթի խարտուբէ:

Գնանորինակ՝ այլ աւելի արուեստական սկզբքան մը վրայ հաստատուած է լուսապատկերացոյց գրութիւնն, և կը կայանայ՝ եթէ կարելի է բռնի բիրտեղեայ հաստածակողով մը ցրտցեալ այլ և այլ գիծերը նանչնալուն մէջ, որոնք կը զանազանին թուով, գունով և տարածութեամբ, ըստ կիրգման նիւթոյն:

Ուրիշ երկնային մարմնոց վրայ այս սեռով յառաջ եկած սորգեանց գաղափար մը տալէն ետքը, կը պատմէ որ այս կերպով կրցեր են գիտնալ Գիտաւորաց տարրաբանական կազմութիւնը:

Այս աստեղաց միջնորոտքն, կ'ըսէ, մեծագոյն մասամբ բնածիտը իրածնի հետ բաղադրութեամբ առաջ եկած մարմնոց լուսաւոր շագճով կազմուած են, ասոր համար այս մարմինըս չբարեմխոյն կը կոչուին: Չբարեմխոյնք են կարանաւթն, լուսաւորող կազն, ասիպտն, և այլն, սակայն ասոնք այն պակասութիւնը ունին որ լուսապատկերացուցին նոյնօրինակ լուսաւոր գիծեր կու տան:

Թետոյ նկարագրելով շատ հետաքրքրական հանգամանք վերջին երկու Գիտաւորաց վրայ եղած դիտողութիւնքը, որոնք ստորականէն աւելի Արևուն մտտեցան, կը նշանակէ թէ ինչպէս մեծագոյն ներմութիւնն որուն ենթարկուեցան կրցեր է շոգիացընել անոնց մէջ ուրիշ նիւթեր, յորս է և նատրի, այսինքն այն մետաղն որ նատրիքն և խոհակերթոցի սղին բաղադրութեան մէջ կը մտնէ: Կը ցուցնէ թէ Գիտաւորաց մէջ կան զեռ ուրիշ նիւթեր, հետեւցընելով զայն գունոց զանազանութենէն՝ որով մեր միջնորոտին մէջ կ'այրին թուչական աստեղք, որոց վրայ արդէն խօսեցանք: Երկնաբարբեր ևս ըստ աստղաբաշխից սմանց Գիտաւորաց կտորուածք պէտք են ըլլայ:

Այս նիւթոյս մասը կը վերջացընէ՝ բացայայտելով որ այս աստեղաց տարրաբանական հասարակաց կազմութիւնն ենթադրել կու տայ

ամենուն մէջ հասարակաց ծագում մը: յետոյ կ'անկնարկէ որ այս ծագումն Արևուն ծագման հետ նոյն է, և Գիտաւորաց քննութենէն կարևոր եզրակացութիւններ հանելու մեր մտլուրակային գրութեան նախնական պատմութեան վրայ եղած կարելիութիւնը կը ցուցընէ:

Գիտաւորի մ'ըլրկրիս հետ բաղխման հետեւ նաց հռչակուոր ինդորոյն անցնելով, լուծեց զայն բարբոխն հանդարտեցուցիչ կերպով: Երկրիս բաղխումն Գիտաւորի մը պոչին հետ՝ յինքեան ասարսի ազդելու բան մը չունի, արդէն Երկիրս շատ անգամ անոնց անչլէն անցած ըլլալով, իսկ եթէ խիտ անհաւանական դիպտուածով մը Երկիրս զարնուէր գիտաւորական միջավայրի մը հետ, այս բաղխումն դժուարու կրնար շնչաւորաց համանգամայն եղծման պատճառ ըլլալ, առ առաւելն թուչական աստեղաց զեզեցիկ անձրևի մը պիտի լուծուէր՝ հանդերձ բազմաթիւ երկնաբարբերք. անտաւրակոյս բաղխման մօտ կողմանքն, բայց միայն անոնք, դժնդակաբար պիտի կրէին:

Ընդհակառակն Սքիաբարելլի անհաւանական չհամարի Գիտաւորաց Արևուն վրայ ինկնայն և իրենց անոր մէջ ընկզմիլն. կը կարծէ որ Արևուն բոլորական խաւարման մէջ նկատուած քանի մը ըլծերն կրնան ներկայացընել Գիտաւորաց պոչեր, զոր դիտելու ժամանակ, մեծ լուսաւորն ներկայելու կ'ըլլայ իր շողարձակ սպիտակացեալ շոգոյ ահագին ուկիրանոսին մէջ որովք ամբողջապէս ձևացած է: Թերևս օր մը շանցիկի որ Արևն չկլլէ՝ փոքր Գիտաւորներ և ասկայն այս կարծիք մ'է, և Հիւսկուե Հիւսկուե ներքին է ոչ այնչափ հաւատք ընծայել անոր:

Սքիաբարելլի լմնուց իր շքեղ բանակցութիւնը քանի մը բարձր խորհրդածութիւններով Գիտաւորաց քննութեան և առ հասարակ աստղաբաշխութեան վրայ: Բագումք Աստղաբաշխութեան գրողիլը պարտապ ժամանակ անցընել կը համարին, իբրև թէ դատարկապարտ դիտողներու գիտութիւն ըլլար: Ոչ. Աստղաբաշխութիւնն իբրև տիեզերաց բնագիտական կազմութեան գիտութիւն մտածուած, որ և կը բովանդակէ ժամանակի և միջոցի լայնատարր ընդարձակութիւն, անմիջական յարաբերութիւն ունի ամենաբարձր փիլիսոփայութեան ամեն խրնդրոց հետ. գիտութիւն մը՝ որ կարող է զարթուցանել այնքան ազնուական յայտ, չի կրնար իբրև սնտոի և ունայն մտածուիլ. նա միշտ սիրելի պիտի ըլլայ բարեկամաց նմարտութեան, և անոնց ամենուն՝ որ նաև սպարտան օրս համուշտուած են որ մարդ չի կրնար միայն հացով ապրիլ:

ԿԵՍՏՅ ՅՈՐԿՈՒՄՆ